ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 12.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/61

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.09.2017թ. թիվ 04/26-3/17642-17 գրությամբ «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 19.09.2017թ. թիվ ԴԴ-3-Ե-6282 գրության հիման վրա, 30.09.2017թ. թիվ 04/26-3/17642-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 05.10.2017թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը մասնակցելով «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հիմք է ընդունել հիմնադրման օրվանից ի վեր իր և տարբեր պատվիրատուների միջև կնքված և հաջողությամբ կատարված պայմանագրերը, որոնք հավաստվում են հաստատված հաշիվ-ապրանքագրերով և հանձնման-ընդունման ակտերով, որոնց հանրագումարը բավարարել է վերոնշյալ Ընթացակարգին մասնակցելու Ընկերության իրավունքը:

Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 06.10.2017թ. ժամը ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ դատական դեպարտամենտը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 19.09.2017թ. թիվ ԴԴ-3-Ե-6282 գրությամբ ներկայացրել է ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար պիլոտային (փորձնական) ծրագրով ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ի տվյալները և անհարժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 06.10.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընկերության ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության համաձայն՝ «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն

նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը զրոյական է եղել, ուստի Ընկերության հայտը մերժվել է:

4. ՍՑ-ԱՄ-2017/61 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/61 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար պիլոտային (փորձնական) ծրագրով ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ն 04.09.2017թ. հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.09.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետով կայացված որոշմամբ «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 06.09.2017թ. սահմանված կարգով ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 06.09.2017թ. հարցում է ներկայացրել «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ի

վերաբերյալ, որին ի պատասխան ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.09.2017թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների ընթացքում համախառն եկամտի հանրագումարը զրոյական է:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.09.2017թ. ժամը 16:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության գնահատման արդյունքում արձանագրվել է, որ ներկայացված փաստաթղթերում բացակայում է Ընթացակարգի հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, ինչպես նաև Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է գնային առաջարկից:

6. Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարը 12.09.2017թ. սահմանված կարգով ծանուցել է «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.09.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.09.2017թ. թիվ 04/26-3/17642-17 գրությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 19.09.2017թ. թիվ ԴԴ-3-Ե-6282 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 63-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

4) էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝

հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ

կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար պիլոտային (փորձնական) ծրագրով ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.09.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետով կայացված որոշմամբ «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 3 100 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 06.09.2017թ. հարցում է ներկայացրել «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.09.2017թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների ընթացքում համախառն եկամտի հանրագումարը զրոյական է:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ի հայտը չի բավարարում «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, քանի որ Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկից: Հետևաբար Ընկերության կողմից ներկայացված վերը նշված հայտարարությունը՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի՝ Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության մասով (հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ գնային առաջարկից) չի համապատասխանում իրականությանը:

Միևնույն ժամանակ համապատասխան հայտարարությունն իրականությանը չհամապատասխանող գնահատվելու դեպքում չի կարող արձանագրվել մասնակցի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որևէ հիմքի առկայություն, քանի որ մասնակիցը տվյալ դեպքում ի սկզբանե գնման գործընթացի շրջանակում չի ստանձնել որևէ պարտավորություն, որը խախտվել է, կամ թույլ չի տվել պայմանագրով նախատեսված որևէ պարտավորության խախտում, կամ չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից, ինչպես նաև չի հրաժարվել պայմանագիր կնքելուց,այլ ներկայացրել է հայտարարություն, որը ստուգվել է սահմանված կարգով և որի՝ իրականությանը չհամապատասխանելու հանգամանքը հիմք է հայտը մերժելու, այլ ոչ թե գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ուստի Խորհուրդը գտնում է, որ Ընկերությանը սույն մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք առկա չէ:

«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ն, որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից, 06.09.2017թ. սահմանված կարգով ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.09.2017թ. ժամը 16:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել հրավերի հավելված 5-ով նախատեսված գրությունը:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարը 12.09.2017թ. սահմանված կարգով ծանուցել է «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունը մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից հավելված 5-ով նախատեսված գրությունը չի ներկայացվել հանձնաժողովին:

Այսպես, «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, ***հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը,*** որին կցվում են՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը

հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Խորհուրդն արձանագրում է, որ «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ն «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորության խախտում, քանի որ ճանաչվելով առաջին տեղ զբաղեցրած մասնակից և պարտավորվելով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը, չի ներկայացրել հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որը չի ներկայացվել նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանը որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումն ուղարկվելուց հետո:

Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ առկա է «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ին սույն մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.09.2017թ. թիվ 04/26-3/17642-17 գրությամբ «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01275939) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**